



## 28. ԿՈՐԱՆԸ ԳՏՆՎԵՑ

Մին հարուստ վաճառականու տասնօթ տըրեկան մին շատ ղատշանդյ ախճիգյ ա իննում, մինզիլ բասներկու տըրեկան տղաւ էս վաճառականը միշտ պարախողներավ քյինամ ար օրիշ երգիիրնե, ապրանք ար տանում ծախում, յա ինք օնում, տարանը մեհետ, էրկու հետ, շատ վախտ էլ էրկու-իրեք տարեն մեհետ կյամ սկրան տոնը: Տրա ամմեննամոտեն մարթը մին քահանա յա իննում: Խնջը տանան վըեր տում ար կյամ քյինամ ղարիբոթուն, քահանան միշտ տրա տանը կենում ար: Տա յար էտ վաճառականնեն տղեն ան ըխճըկանը պահողը նան դաստիրակողը: Մեհետ էլ վաճառականը վըեր քյինամ ա օրիշ երգիիր, քահանեն մըետկը ծովում ա, օգում ա ըխճըկանը մուտանաւ: Մին քշեր, հենց վըեր տղան քունավ ա հնցընում, քահանան նի յա մննում ըխճըկանն օթաղը, տըեսնում լիհան նոր ա օգում քոն ինի: Ըխճըկանը նհետ շատ էրկան խոսում ա, զարափաթինե անում: Ախճիգյը հալա սկըրթա պեն շար կլնի ինզյում, հոր տըեղ ար տիննում: Վերչը, քահանան ըխճըկանը պարզ ասում ա, վըեր էտ քշերն օգում ա սկրան քըշտին մնաւ: Ախճիգյը թողում լի: Քահանան զոռավ օգում ա, թա մուտանաւ, ամժալ շի կյամ, ախճիգյը կզնըվում ա, տրան խայտառակ անում: Տա յել էթյը մին շատ էրկան նամուկ ա կյիրում հորը, վըեր ախճիգյտ էս քըզաքումը տղաւ շի թողում, լոխճինին նհետ շոռ ա կյամ, մըեզ լոխճինին խայտառակ անում: Էտ վաճառականն էլ շատ ըռնախում մարթ ա իննում, տղեն յիրա կյիրում ա, թա քըզորտ կըսպանես, մելդը հումց կուրցընես, վըեր հետն ու թըեփուռն

ուրվա վուշ, իսկ կյեցէ շորերն հիբան առնումը թաթախ կանես պահես, ևս կյամ տրեսնաւու: Վըեր ասածս անես վուշ, կյիլականը ժըմ ծըեր հոխտեն էլ ըսպանեմ:

Տղան նամակը կարթում ա, գյուղում չի, թա հինչ անեւ քիին անմ ա քահանեն կոշտը, վըեր մալքաթ անեւ Տա յիւ թա՝ յանի հորըտ խօսլաթը գյուղում լը՞ս: Մին ա, վըեր տու քուլքերըտ ըսպանես վուշ, ինչյը ճոխտես էլ ըսպըննական աւ Տղան թա՝ պահինչ անեմ: Քահանան ասում ա.—Լավն էն ա, վըեր քվորըտ քզնըհետ յոր օնես, քյինաս վըերս: Հենց վըրսատըեղ էլ կըսպանես, ժմակումը մին կորած տըեղ թաղես, շորն առնումը թաթախ անես, պիրիս:

Տղան, ճարը կտրած, քվորը յոր ա օնում, քյինամ վըերս Ախճիգյը շատ ուրիսանում ա, ըսկսում թովուալը, վըեր ախպորը նհետ քյինամ ա վըերս:

Հենց վըեր նի յըն մննում ծմակը, ախպըերը եշում ա, տըեսնում մին վըեր ինգյած էրկան ծառու զրադե մին զաշանգը, կարմանը տոպ փսած: Տղան քվորը թա՝ կըկարե՞ս քյինաս էն տոպը կտրես, պիրիս: Ախճիգյը վազ տալավ քյինամ ա փաղավը կունում, վըեր տոպը կտրես, պիրի տա ախպորը: Ախպըերն էլ թուվանգյը թուշ ա օնում, վըեր յիրա անես, քվորն ըսպանես: Հենց էտ վախտը ծառեն տական մին ըլրաստրակ ա տուս կյամ, թա փախճի տղան թուվանգյը հլորում ա, ըլրըստրակեն նշան փըռնուն, յիրա անում, ըսպանում: Ըլրաստրակը վըեր ա ինգյում, ախճիգյը վազ ա տամ, վըեր յոր օնես, տղան մուտանում ա, ըլրըստրակեն եշում, տըեսնում հոքուն յիրա, աշկերը հլոր-հլոր ընելիս: Տղան վըեր ըլրըստրակեն տի տըեսնում ա, սըերտը տըզըշհան ա ինձնմ: Մտածում ա, թա յանի քուրս էլ պիտի մըսնելիս աշկերը տի հլոր-հլոր անես, մինգյել ասում՝ հինչ օզում ա, թող ինի, ևս իմ քըվորս ըսպըննական լըմ: Հորը նամակը, քահանեն նհետ ըրած մըսլքաթը, ամեն հինչ քվորն ասում ա, ետնան էլ թա մունք ամենեքյանբախտ քուրուախպըերն ընք, վըեր էն հարը մըերն ա, մունք կըրըլական լընք հըքուր իրես տըեսնանք:

Ախպէրը յոր ա օնում քվորը կյեցն շորերը ըլրըստրակեն առնումը թաթախ անում, ուրան էլ թա՝ քյինա տուս եք մին հեռու տըեղ, ընդեղեք կլնիստ պահե:

Ախճիգյը մենակ տակե շորերը կյեցը հղե յա ինձնմ քյինամ, մին հեռու ծորում մըթեն ա ինգյուն, նի յա մննում քըերծեն զաթումը քշերը կենում, լաւսանհում աւ էտ օրը մին օտպուակ եկած

ափիցեր շանը եր կալած, տըեղերը վըերս ընելիս ա ինձնմ: Եռնը քիինամ ա տրա վըեր քըցած ըլրաստրակը յոր օնում պիրում, մինդյել վըեր եր կալած տում ա կյամ էտ քըերծին դաթը, ըսկում տըեղ շատ էրկան հաշիլը: Էտ ափիցերը թուվանգյը եր կալած կյամ ա բիդի քըերծին դաթը եշում, տըեսնում հըուցանա մին հինչ վըեր պեն ա ուրվամ, բայց գյուղում չի, թա հինչ ա: Թուվանգյը թուշ ա օնում, վըեր յիրա անե վըեր քըի, բուրդան քըերծին դաթան սան ա ըսկանում: «Ա՞խապըեր, ա՞խապըեր, յիրա մի անիլ, ես ախճիգյ ըմբ: Ափիցերը թա՝ պա խե տում լը» կյամ: Ախճիգյն ասում ա:—Տկլոր ըմ, թա ծըեռքիտ շոր կա, ինձ տո կիենամ, տում կյամ:

Տրա ծըեռքին մին պլաշ ա ինհնմ, տամ ա ըխնըկանը. կյենում ա, տում կյամ: Տղան հրցընում ա, թա տու հո՞ւ վըս, հի՞նչ ըս, ըստըեղերը հի՞նչ ըս անում, ախճիգյը թա՝ իմ նազյը էրկան ա, ես հալթ ազափ ըմ, թա բարի մարթ ըս, ինձ մարթու տո, վըեր կարեմ խըթա հեռու մնամ: Տղան թա՝ քըզանա լավ ախճիգյ շրմ քըթիննական, սօրվա ամենալավ վըերսըս տու վըս իլաւ, եթ քըեղ տանեմ մըեր տոն, ինձնըհետ փսակվե: Ախճիգյը տրա նհետ քյինամ ա, տղեն հարը, մարը, ախապըերքը, քուվըերքը շատ ուրիսանում ըմ, պիրում ըն տրան լավ շորեր կյից տամ, տահանք էլ շատ հարուստ ըն ինհնմ, մին մըեթ հըրսանները ըն անում, տղան հառցնը թողում ա տանը, ինքյը քյինամ ուրան ծառայությանը: Վըեր մին տարե կլիսավն անց ա կիենում, տահանց մին տղա յա ինհնմ: Տղեն յիրա նամակ ըն կյիրում, վըեր կընեգյըտ մին դաշանգյ տղա յա պիրալ: Տա օզում ա օտպուսկ յոր օնե կյա տոն, պեց չըն թողում, ասում ըն թա՝ շատ ըք օզում նիրուկ տըեսնաք, թող ախճիգյը պարախող նըստե, կյա ըստըեղ:

Տղան նշընածեն յիրա նամակ ա կյիրում, սա յել եր ա կենում պըդրաստվում, վըեր պարախոդավ հզե ինի: Մարթին յիրա հըռակեյիր ա տամ, թա կյամ ըմ, ինձ ըսպասե: Տա վըեր խոխան նհետը պարախոդ ա նըստում, հալա ծուվեն կեսը լհըսած, էտ պարախոդեն մըեծը, վըեր մին շատ կիեշ, այբեջառ, համ էլ ըռնախում մարթ ա ինձնմ, տրան մուտանում ա, թա ըստըեղ խուխան հետե լավ չի, պեր մըեր կոշար, ընգըեղ լավ տըեղ կա: Ախճիգյը տրան հըվատում ա, խոխան յոր օնում, քյինամ: Էտ մարթն ըինըկանը մուտանում ա, ասում.—էս քշեր իմ քշտիս պիտի մնաս: Ախճիգյը տրան յիրա յա պրծընում, ասում.—քըեղ կարեն, մըրթըվարի պահե: Էտ մարթն էլ ըխնըկանը թա՝ քեղ քսան րոպե

Ժամանակը ըմ տամ, մտածե, թա օզում շրս, խոխառ քցիւական ըմ ծովը:

Ախճիգյը քյինամ ա մտածում, մտածում, գյուղում լի, թա հինչ անե:

Էտ մարթին նան ըխնըկանը խոսկերքը լոխ մին մատրսս ըսկացած ա ինքնմ: Տա ըխնըկանը մուտանում ա, հրցընում, թա իմ յը՝ ողիլսոր: Ախճիգյն ամեն հինչ ասում ա, տղան թա՝ ես ամեն հինչ գյուղում ըմ, նրա խըսյաթը փէս ա, միշտ էլ ըսածին տարն ա: Ախճիգյը տրան հրցընում ա, թա մեհենգի կարել լը՝ ինձ մին պենավ էլլա քյինապյ անես: Տղան թա՝ վրել մին թահը էլլա կավուշ, մենակ մին պեն ա մենամ՝ խոխան տինինքը լութկեն մաշին, յա բախտինա ծովումը պեց թողենքյ, ետնան տու կասես, վրեր խոխան տու վրս ըսպանալ, հանցու վրեր ուրան ծըեռքը լինոյի:

Տի յել անում ըն: Էտ այրեջառը նորից կյամ ա ըխնըկանը հրցընում, թա հինչ ը՝ մտածալ, հոր ա՝ խոխան: Տա թա իմ խոխան իմ ծըեռքավըս ըմ ըսպանալ, վրեր քու ծըեռքըտ լինգի:

Էտ մարթը նորից ըխնըկանն ասում ա.—Վըեզ տասսը րոպե ժամանակ ըմ տամ, յա պիտի կյամ կոշտըս, յա էլ քեզ ըմ քցըւական ծովը:

Տա վրեր քյինամ ա, էլլա էտ մատրոսը կյամ ա ըխնըկանը կոշտը: Ախճիգյը թա՝ պա խոտի պեն կա: Մատրոսը թա՝ էլ վրել մին թահը լի կա, գյուղում լըմ, թա հի՞նչ ասեմ, հի՞նչ անեմ: Ախճիգյը թա՝ կարել լը՝ ինձ էլ տինիս ինդի մին լութկում, ծովումը պեց թողես: Տա թա՝ կըկարեմ:

Մատրոսը լոթկան պիրում ա, ըխնըկանը նըստըցընոսի, ծովումը պեց թողում: Մին սաղ օր լոթկան ծովէն յիրա լըեղ ար տամ: Օրվա վերշին ախճիգյը եշում ա, տըենում հընթցանա մին լութկու մնան պեն ա ուրվամ: Տրա մտկավի անց ա կենում, վրեր ուրան խոխան կինի: Ճիրին մաշին տա ծըեռքեցն թափ տալավ լոթկան քշնում ա թիղի էտ անգլունը, խոխան հըսնում, լոթկան մուտըցընում, խոխան յոր օնում, տինիւմ ուրան լութկումը: Դիրքուգյունն վախտը քամե յա անում, լոթկան քշնում թիղի էն քըղաքեն կոշտը, վրերդըեղ վրեր ուրան հարն ու ախապըերն ըն ապրում:

Ախճիգյը տըեղ տուս ա կյամ քաղաքը, խոխան տանում մին մարթու կոշտ, թա հինչ օգես, կըտամ, մենակ թա էս խոխան մին քանի ամես պահե: Էտ մարթը թա՝ ես խոխան շօնեմ, ինձ տո

միշտ պահեմ, տա թա՝ չէ՛ Վերլը, խոխան թողում ա տրա քշտին, ինքը մազերը կրնցընում, տղու շորեր կյենում, թյինամ հորը տոնը, ախպորը մուտանում, թա ծըեր քշտին ինձետե մին գործ չի ինիւ, մին տարե առանց փող կըխշադեմ, Ախուցերը թա՝ կաց քյինամ հորըս հըրցընեմ, տրեսնամ հինչ ա ասում, Ախուցերը քյինամ ա հորը կոշտը, հըրցընում, հարն ասում ա. — Թող էտ բըխնեն, բուտանեն, հըրթիներեն-պենին եշին

Ախճիգյը տըեղ մնամ ա, հորն ասած պիներան կըման տանը մնացած պեներն էլ ա անում՝ սրգինմ, լուվանում, թիմըղընում, ամեն հինչ սարյ-սարյ պահում:

Անց ա կենում մին էրկու-իրեք շերեթ, հորը քյինալի վախտը կյամ ա: Լոխ հըվարգում ըն, վըեր հող տինին, ախճիգյն էլ ա նըհըտնեն քյինամ: Հարը պարախողավ պիտի քյինար, ժըղովուրթը հըվարգում ըն պարախողեն կոշտը: Ախճիգյը եշում ա, տրեսնում՝ տա համան պարախողն ա, վըեր ինքյը ուղեցալ ա նստե, քյինան նշընածեն կոշտը: Պարախողեն մըհեծեն ան մատրուսներն ուստաին նինանչում ա: Մըխըրի էն դոլին էլ ուրան նշանածեն ա ինոնմ դիլխոր վըեննը կացած: Տա վըեր հըռակյիրն ըստանում ա, եշում տրեսնում կնեգյը կյամ չի, մին քանի օրավ պեց ըն թողում, վըեր կյա շոռ կյա, քըթենած: Ախճիգյը վըեր տրան տըենում ա, կարում չի ուրան պահե: Թըկդան օզում ա, թա մուտանա, մինգյել զոռավ ուրան դրադ ա քաշում: Լոխ հըվարգում ըն տըեղ, ըսկըսում ուրիխանալը, հու հինչ գլուղդնմ ար, ուրան շնորթը նշանց ար տամ, տա յել երթ ա ասում, պար ա կյամ, ծիկըղընում: Լոխ մուտանում ըն, ուրիխոթուն անում, մենակ էտ ըխճեկանը նշանածը դիլխոր, դրադ վըեննը կացած ա ինոնմ, մուտանում չի: Ախճիգյը քյինամ ա տրա կոշտն էլ, զարափաթնե անում, ծիքյ-ծիքյ անում, ասում՝ տու վըել մուտաց, տու վըել մին պենավ քիզ նշանց տու Տա թա կորի, ուադ իլ, ես մեյմունու հընգեր շըմ: Ախճիգյը նորից հըվարգած մարթուցը մուտանում ա, թա հեկերյ մին հունց խաղ խաղ անենքյ, ես մին պեն նազլ անեմ, նազլ ընելիս հու վըեր մին տըեղ ասե սոստ ա, փըռնենքյ, թող անենքյ քցինքյ: ծովք: Տահանք թա՝ հա՛: Ախճիգյն ուրան կըլխավին անց կացածը լոխ նազլ ա անում, կյամ ա հսնում էն տըեղը, վըեր քահանան օզում ա ուրան յիրա սաթաշմիշ ինի, տըեղ քահանան թա՝ սոտ ա: Հըվարգած մարթիցյը տրա վըննը-կըլխան փըռնում ըն, թող անում, քցոնմ ծովքը Ախճիգյը էլլա յա նազլ անում, վըեր կյամ ա հըսնում ափիցերին նըհետ փըսրկվելին, էտ ափիցերն ըսկանում ա, մուտանում, անջուկ օնում, շատ

զարմանում ա, թա էս հիշտըղան ա՞ գյոնդում, ծտնան վըեր հըս-  
նում ա պարախողավ հղե ինիլին, ամեն հինչ վըեր նազ ա անում,  
հըսնում պարախողին մըհեին խուսկերքին, էտ պարախողին մըհեն  
էլ էն զոլան թա՝ սոտ ա: Տրան էլ ըն վըննըկըլխան փըռնում, թող  
անում քցում ծովը, ծտնան ախճիզյը շլափկան կըլխան վըեր ա  
օնում, հարը, ախպըբը, նշանածը տրան ճինանշինմ ըն, ուրիա-  
նում, ըխշարքավը մին տըեռնում: Հորը հղե լըն տինհնմ, քյինամ  
խուսին յոր օնում, նշանածը տրան տանում ա թողում հիրանց  
տանը, ինքը քյինամ ուրան ժառայությանը:

